ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N 1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն

_____ Պ. Սանթրոսյան

«03» 06. 2024թ.

Դասախոսների վերապատրաստման և մասնագիտական կատարելագործման մեխանիզմներ

Կրթությունն արդի պահանջներին համապատասխանեցնելու համար պարտադիր պայման է դասախոսների պարբերական վերապատրաստումները: Դասախոսների գիտելիքները, հմտությունները և մեթոդները կատարելագործելով՝ նպաստում ենք ուսուցման գործընթացի արդյունավետությանը: Այս գործընթացը շարունակական է, քանի որ դասախոսի դասավանդման մեթոդներն և նյութի բովանդակությունը տարեցտարի պետք է արդիականացվեն:

Վերապատրաստումները նպաստում են նաև դասախոսների մասնագիտական աճին, շարունակական կրթությունը և ակտիվությունը մասնագիտական զարգացման նախաձեռնություններում:

Ստորև ներկայացվում են մեխանիզմներ, որոնցով դասակարգվում է դասախոսների մասնագիտական կարիքների բացահայտման և վերհանման մեթոդները.

1. Յուրաքանյուր ուսումնական տարվա ավարտին ամբիոններում նիստի արձանագրությամբ քննարկվում և վերհանվում են դասախոսների վերապատրաստման կարիքները, այնուհետև հանձնվում ՆՈԱԿ: Գնահատելով դասախոսական կազմի կարիքները՝ Քոլեջը տեղեկացնում է ամբիոններին նախատեսվող վերապատրաստման մասին և առաջարկում դասախոսների թեկածություններ:
2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա նախորդող շաբաթում դասախոսները լրացնում են հարցաթերթիկ, որում նշում են, թե ո՞ր ոլորտում կցանկանային

կատարելագործել իրենց հմտությունները՝ մասնագիտական, մեթոդական, հետազոտական, այլ:

3. Հաշվի առնելով ուսանողների շրջանակներում իրականացված հարցումները՝ դասախոսների գնահատման վերաբերյալ, ինչպես նաև դասալսումների արձանագրությունները՝ ՆՈԱԿ-ի կողմից կատարվում է դասախոսի գնահատման վերլուծություն: Վերհանվում թույլ դիտարկվում են որպես առաջնային խնդիր՝ տվյալ դասախոսին համապատասխան վերապատրաստման ուղղորդելու:

Այսպիսով, վերը նշված մեխանիզմները ծառայում են որպես գործիքակազմ՝ դասախոսներին վերապատրաստելու առաջնահերթությունները հաշվի առնելու նպատակով:

Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջի դասախոսների վերապատրաստման դասընթացների թեմաների ցանկ

Դասընթացի ուղղվածությունը	Առաջարկվող թեմաներ	Նշումներ
Մասնագիտական վերապատրաստում		
Մեթոդական վերապատրաստում	1.Դասավանդման նորագույն տեխնոլոգիաներ 2.Դասավանդման ինտերակտիվ մեթոդներ 3. Ուսուցման խառը մեթոդներ 4.Գնահատում, չափում և հետադարձ կապի ապահովում 5. Ուսանողի մոտիվացում 6.Համակարգչային գրագիտություն (Word, Excel, Internet և այլն) 7.Անգլերեն լեզվի իմացություն (ըստ մակարդակների) 8.Մոդուլներին ուղղված վերապատրաստում	
Հետազոտական վերապատրաստում	1.Հետազոտական ծրագրեր իրականացում (գիտաժողովներ, սեմինարներ, ֆորումներ, միջազգային փորձի փոխանակում)	
Ըստ նախասիրությունների		